ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
23.08.2022 թ. թիվ 141Ա որոշմամբ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2021 թ. 3-րդ եռ. - 2022 թ. 2-րդ եռ.)

2021 թվականի 3-րդ եռամսյակից 2022 թվականի 2-րդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում պահպանվել է բարձր գնաճային միջավայրը: Դրան նպաստել են թե՛ արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ազդեցությունները, թե՛ ներքին պահանջարկի աճը: Այսպես՝ 2021 թ. երկրորդ կիսամյակում պատվաստանյութերի լայնածավալ կիրառումը զգալիորեն մեղմել է համավարակի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, որի արդյունքում դիտվել է տնտեսական ակտիվության և ամբողջական պահանջարկի սպասվածից ավելի արագ տեմպերով վերականգնում: Սակայն համաշխարհային պահանջարկի նման տեմպերով աճը, արժեշղթաների խաթարումների պարագայում, ուղեկցվել է արտաքին գնաճային միջավայրի զգալի ընդլայնմամբ, ինչը ներմուծվող մի շարք ապրանքների միջոցով ՀՀ ապրանքային շուկայի գներին է փոխանցել գնաճային զգալի ազդեցություն: Այս պայմաններում, բարձր գնաճը զսպելուն և գնաճային սպասումները խարսխելուն ուղղված ԿԲ քաղաքականության արդյունքում, տարեվերջից դիտվել է 12-ամսյա գնաճի էական նվազում, սակայն 2022 թ. փետրվարի վերջից, ռուս-ուկրաինական հակամարտության սրման և Ռուսաստանի դեմ պատժամիջոցների կիրառման ազդեցությամբ, թե՛ միջազգային ապրանքահումքային շուկաներում և թե՛ ՀՀ տնտեսությունում ձևավորվել են գնաճային նոր գործոններ:

Առաջնորդվելով գների կայունության նպատակի ապահովման սկզբունքով և արձագանքելով ստեղծված իրավիճակին՝ ԿԲ-ն հաշվետու ժամանակահատվածում շարունակել է վարել դրամավարկային պայմանները խստացնելու քաղաքականություն՝ բարձրացնելով քաղաքականության տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 2.75 տոկոսային կետով (ընդ որում, 2022 թ. մարտին ԿԲ-ն բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքը 1.25 տոկոսային կետով՝ արձագանքելով փետրվարի վերջից աննախադեպ անորոշությունների պարագայում ձևավորված բարձր գնաճային իրավիճակին): Արդյունքում՝ տարեվերջից գնաճային միջավայրը որոշակիորեն մեղմվել է, և 12-ամսյա գնաճը մինչև դեկտեմբեր ավելանալուց հետո (հունիսի 6.5%-ից նոյեմբերին հասնելով 9.6%-ի), 2021 թ. դեկտեմբեր – 2022 թ. փետրվար ժամանակահատվածում նվազել է մինչև 6.5%, իսկ երկրորդ եռամսյակում կրկին ավելացել է՝ հունիսին հասնելով 10.3%-ի: Նման իրավիճակում կանխատեսվում է, որ միջնաժամկետ 3 տարվա հորիզոնում գնաճի տեմպը աստիճանաբար կթուլանա և կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

1. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2021 թ. 3-րդ եռամսյակի ծրագրում ներկայացված սցենարի հիմնական դատողությունների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածի առաջին կեսին բարձր գնաճային միջավայրը պահպանվելու էր՝ պայմանավորված ապրանքահումքային միջազգային շուկաներից սպասվող ազդեցություններով և արտադրական կարողությունների ընդլայնման համեմատությամբ ներքին պահանջարկի առաջանցիկ աճով: Այնուհետև, աստիճանաբար նվազելով, 2022 թ. մոտենալու էր նպատակային 4% ցուցանիշին՝ միջնաժամկետում կայունանալով դրա շուրջ:

Հաշվետու ժամանակահատվածում՝ մինչև 2022 թ. մարտը, ինչպես և սպասվում էր, 12-ամսյա գնաճն աստիճանաբար նվազել է և արդեն փետրվարին կազմել 6.5%՝ առաջիկայում իր նպատակային ցուցանիշին մոտենալու միտումով: Սակայն փետրվարի վերջից, պայմանավորված աշխարհաքաղաքական զարգացումներով, դիտվել է գնաճային միջավայրի զգալի ընդլայնում և գնաճի սպասվող մակարդակի էական գերազանցում: Այդ պատճառով, երկրորդ եռամսյակում նպատակային ցուցանիշին հասնելու ուղեգիծը կարճաժամկետ հատվածի համար ճշգրտվել և կանխատեսվել է գնաճի ավելի բարձր մակարդակ:

Գրաֆիկ 1

Դիտարկվող ժամանակահատվածում 12-ամսյա գնաճը հիմնականում ցուցաբերել է նախանշված ուղուն համահունչ վարքագիծ, միայն 2022 թ. երկրորդ եռամսյակում սպասվող մակարդակը զգալիորեն գերազանցվել է, ինչից ելնելով՝ տվյալ եռամսյակի կարճաժամկետ ցուցանիշը կանխատեսվել է ավելի բարձր մակարդակում



2021 թ. երկրորդ կիսամյակում, տարեսկզբից կորոնավիրուսի դեմ պատվաստանյութերի լայնածավալ կիրառման և տնտեսական խիստ սահմանափակումներից ձեռնպահ մնալու պայմաններում, շարունակվել է համաշխարհային տնտեսական ակտիվության և արտաքին պահանջարկի ավելի արագ տեմպերով վերականգնումը: Հայաստանում գնաճային գործոնները հիմնականում պահպանվել են՝ պայմանա-

վորված արտաքին հատվածից դեռևս փոխանցվող գնաճային ազդեցություններով (էներգակիրների բարձր գների և արժեշղթաների խաթարումների պահպանում) և պահանջարկի դրական միջավայրի ձևավորմամբ: Վերջինիս մեծապես նպաստել է հատկապես ներքին ծառայությունների ոլորտում արձանագրված բարձր աճը, որն իր հերթին, սպասվածի համեմատությամբ, կրել է զբոսաշրջության բարձր տեմպերով աճի ազդեցությունը: Միաժամանակ, թեև տարեվերջին դիտվել է 12-ամսյա գնաճի տեմպերի որոշակի նվազում, այնուամենայնիվ, պահպանվող գնաճային գործոնների և կարգավորվող ծառայությունների գների ակնկալվող փոփոխությունների ազդեցությամբ, հասարակության գնաճային սպասումների մակարդակը մնացել է բարձր: Հաշվի առնելով այս զարգացումները՝ ԿԲ-ն 2021 թ. երկրորդ կիսամյակում աստիճանաբար բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ընդհանուր հաշվով, 1.25 տոկոսային կետով:

2022 թ. առաջին կիսամյակում ՀՀ մակրոտնտեսական միջավայրը և հատկապես գնաճային զարգացումները մեծապես կրել են փետրվարի վերջից սրված ռուս-ուկրաինական հակամարտության, Ռուսաստանի տնտեսության նկատմամբ կիրառված տարբեր պատժամիջոցների և դրանցից ածանցված աննախադեպ մեծ անորոշությունների ազդեցությունները: Դրանք արտահայտվել են ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական աճի տեմպերի զգալի դանդաղմամբ, ինչպես նաև արժեշղթաների խաթարումների հետևանքով էներգակիրների և պարենային ապրանքների միջազգային շուկաներում գների անհամեմատ բարձր աճով: Նման զարգացումների բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա արտահայտվել է հիմնականում կարճաժամկետ հատվածում տնտեսական ակտիվության որոշակի նվազմամբ, իսկ ՀՀ ապրանքահումքային շուկայի վրա՝ ներմուծվող առանձին ապրանքների բարձր գների ձևավորմամբ: 2022 թ. երկրորդ եռամսյակում արդեն դիտվել է տնտեսական ակտիվության աճի տեմպերի զգալի արագացում՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների ճյուղի բարձր աճով, որին էլ նպաստել է միջազգային այցելուների և ֆինանսական մեծածավալ ներհոսքը Հայաստան: Սա դրսևորվել է որպես հաշվետու ժամանակահատվածի վերջում գնաճային միջավայրի ընդլայնման էական գործոն՝ հատկապես ծառայությունների ոլորտում: Միևնույն ժամանակ, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով, կարճաժամկետ հատվածում դիտվել է նաև ՀՀ ֆինանսական շուկայի տատանողականության ու երկրի ռիսկ-հավելավճարի զգալի ավելացում, ինչը ևս նպաստել է գնաճային սպասումների և գնաճային ռիսկերի որոշակի աճին: Այս իրավիճակում ԿԲ-ն 2022 թ. առաջին կիսամյակում բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքը 1.5 տոկոսային կետով: Ընդ որում, ԿԲ-ն համեմատաբար մեծ քայլով՝ 1.25 տոկոսային կետով, դրամավարկային պայմանները խստացրել է մարտին՝ արձագանքելով աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված բարձր գնաճային իրավիճակին: Երկրորդ եռամսյակում ԿԲ-ն ձեռնպահ է մնացել տոկոսադրույքի փոփոխությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնաճի գործոնների կազմում գերակշռում էին համաշխարհային գնաճային երևույթների և, հատկապես, արտաքին պահանջարկի ազդեցությունները, որոնք ՀՀ դրամի զուգահեռաբար ընթացող արժևորման պարագայում աստիճանաբար նվազելու էին: Բացի այդ, 2022 թ. առաջին եռամսյակում դրամավարկային պայմանների համեմատաբար մեծ քայլով խստացումը գնահատվում էր որպես բարձր գնաճային միջավայրի հետագա մեղմմանն ուղղված բավարար արձագանք:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ֆինանսական շուկայում կարճաժամկետ տոկոսադրույքներն առավելապես ձևավորվել են ԿԲ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Հարկ է նշել, որ 2022 թ. սկզբին ընթացող աշխարհաքաղաքական զարգացումները մարտին արտահայտվել են նաև ՀՀ արժութային շուկայում անորոշությունների աճով, ինչն էլ իր արտոցոլումն է գտել ՀՀ դրամի վարքագծում: Այսպես՝ սկզբնական շրջանում, ձևավորված աննախադեպ մեծ անորոշության պարագայում, արժութային շուկայում արձանագրվել է դրամի կտրուկ արժեզրկում: Այնուհետև, ներքին ծառայությունների նկատմամբ միջազգային այցելուների պահանջարկի (արտաքին պահանջարկի) զգալի աճի և արտերկրից ֆինանսական փոխանցումների մեծ ներհոսքի ազդեցությամբ ՀՀ արժութային շուկայում դիտվել է դրամի զգալի արժևորում: Այդ ընթացքում, շուկայի կարճաժամկետ խաթարումների և խնդիրների չեզոքացման նպատակով, ԿԲ-ն արժութային շուկայում ունեցել է որոշակի իրավիճակային միջամտություն՝ նպաստելով ֆինանսական շուկայի բնականոն գործունեությանը:

Գրաֆիկ 2

ԿԲ գործիքների և կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքների վարքագիծը



Ամփոփելով նշենք, որ հաշվետու ժամանակահատվածում վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է, ընդհանուր հաշվով, 2.75 տոկոսային կետով և 2022 թ. հունիսին սահմանվել 9.25%:

Արդյունքում, ինչպես և կանխատեսվում էր, հաշվետու ժամանակահատվածի առաջին հատվածում 12-ամսյա գնաճն ավելացել է՝ 2021 թ. հունիսի 6.5%-ից նոյեմբերին հասնելով 9.6%-ի, որից հետո, դրամավարկային քաղաքականության գործողությունների փոխանցվող ազդեցությամբ արձանագրվել է նվազում՝ 2022 թ. փետրվարին՝ 6.5%: Այնուհետև, աշխարհաքաղաքական իրադարձություններով պայմանավորված, ցուցանիշը զգալի ավելացել է և հունիսին հասել 10.3%-ի: Գնահատվում է, որ իրականացվող հետևողական դրամավարկային քաղաքականության արդյունքում գնաճն աստիճանաբար կնվազի և միջնաժամկետ հորիզոնում կմոտենա նպատակային 4% ցուցանիշին:

2. ԳՆԱՃԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2021 թ. վերջից գնաճային միջավայրի որոշակի մեղմմանը 2022 թ. երկրորդ եռամսյակից հաջորդել է գնաճի կտրուկ արագացում:

Հաշվետու ժամանակահատվածի սկզբում բնականոն գնաճի արագացմանը շարունակել է նպաստել ներմուծված պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճը: Վերջինս իր վրա է կրել ինչպես միջազգային շուկաներում պարենային ապրանքների գների, այնպես էլ ձևավորված բարձր համախառն պահանջարկի ազդեցությունը: Այսպես՝ միջազգային շուկաներից փոխանցվող ազդեցությունների հետևանքով ներքին տնտեսությունում դիտվել է «Հացաբուլկեղեն և ձավարեղեն», «Մսամթերք», «Կաթնամթերք», «Յուղեր և ճարպեր», «Շաքարավազ» ապրանքախմբերի գների կտրուկ աճ (ներմուծված պարենային ապրանքների գներն այդ ընթացքում աճել են մոտ 15%-ով): Իսկ էներգակիրների միջազգային գների ավելացումն իր ազդեցությունն է փոխանցել վառելիքի գների վրա: Հատկանշական է նաև միջազգային բեռնափոխադրումների գների զգալի աճի և արտադրաշղթաների խաթարումների ազդեցությունը ներմուծվող մի շարք ապրանքների (հատկապես՝ էլեկտրատեխնիկայի, հագուստի և կոշիկի, անձնական խնամքի պարագաների) գների աճի վրա:

Ինչպես և կանխատեսվում էր, վերոնշյալ գործոնների գնաճային ազդեցությունները թուլացել են 2021 թվականի վերջից՝ պայմանավորված ՀՀ ԿԲ-ի վարած հետևողական դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ: Սակայն 2022 թվականի առաջին եռամսյակի վերջում, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով, ինչպես միջազգային ապրանքահումքային հիմնական շուկաներում, այնպես էլ ՀՀ տնտեսությունում արձանագրվել է գնաճային միտումների կտրուկ ավելացում: Վերջինս լրացուցիչ ճնշում է գործել հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների գների վրա: Միևնույն ժամանակ, ՀՀ ժամանած միջազգային այցելուների գործոնով պայմանավորված, ամբողջական պահանջարկի զգալի արագացումն էական գնաճային միջավայր է ձևավորել նաև տեղական արտադրության ապրանքների և ծառայությունների շուկայում, որտեղ դիտվել են գնային հարաբերական կոշտություններ ունեցող մի շարք ծառայությունների (բնակարանի վարձակալություն, ռեստորաններ և հյուրանոցներ, վարսավիրանոցային, ֆինանսական, փոստային ծառայություններ) սակագների ճշգրտումներ:

Բնականոն գնաճի տարրերից «Ծխախոտային արտադրատեսակներ» և «Ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբերի գների աճը, ինչպես և գնահատվում էր, կրել է նաև տարեսկզբին ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխության ազդեցությունը:

Բացի վերը նշված գործոններից, հաշվետու ժամանակահատվածի հենց սկզբից գնաճի արագացմանն էականորեն նպաստել է սեզոնային պարենային ապրանքների՝ սեզոնին ոչ բնորոշ թույլ գնանկումային դրսևորումը: Հատկապես տվյալ ժամանակահատվածում բանջարեղենի թույլ գնանկումային վարքագծի վրա իրենց ազդեցությունն են ունեցել ինչպես եղանակային վատ պայմանները, այնպես էլ որոշ առանձին ապրանքատեսակների ցանքատարածությունների կրճատումն ու արտահանման աճը: Ազդեցության այս գործոնները հիմնականում պահպանվել են հաշվետու ժամանակահատվածի ողջ ընթացքում:

Կարգավորվող ծառայությունների սակագները 2022 թվականի առաջին կիսամյակում, ինչպես և ակնկալվում էր, արձանագրել են կտրուկ աճ՝ պայմանավորված

հունվարից ջրամատակարարման, մարտից՝ էլեկտրաէներգիայի, ապրիլից՝ նաև բնական գազի մատակարարման ծառայությունների սակագների աճով: Հունիսի վերջի դրությամբ 12-ամսյա գնաճին դրանց ընդհանուր նպաստումը կազմել է մոտ 1.0 տոկոսային կետ:

Գրաֆիկ 3

2021 թվականի վերջին գնաճային միջավայրի որոշակի մեղմմանը 2022 թվականի երկրորդ եռամսյակում հաջորդել է գնաճի կտրուկ ավելացում



Աղյուսակ 1

Ապրանքախմբի անվանումը	Կշիռներ	12-ամսյա գնաճը 2022 թ. հունիսին	Նպաստումը տ/տ գնաճին
Բնականոն գնաճ	**75.10**	**9.4**	**7.1**
Հացաբուլկեղեն և ձավարեղեն	8.10	19.9	1.6
Միս	9.00	11.6	1.0
Յուղեր և ճարպեր	2.60	5.1	0.1
Շաքարավազ	0.50	6.9	0.0
Կաթնամթերք	4.15	21.0	0.9
Ալկոհոլային խմիչքներ	2.40	6.9	0.2
Ծխախոտային արտադրատեսակներ	1.40	10.3	0.1
Հագուստ	1.30	10.5	0.1
Կոշիկ	0.80	10.4	0.1
Կենցաղային սարքեր	0.60	7.4	0.0
Վառելիք	6.80	9.5	0.6
Օդային մարդատար տրանսպորտի ծառայություն	0.60	17.6	0.1
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	1.00	32.9	0.3
Ռեստորաններ և հյուրանոցներ	1.00	6.8	0.1
Վճարներ բանկերի, փոստային բաժանմունքների ծառայությունների համար	0.58	7.5	0.0
Ներմուծված պարենային ապրանքներ	**14.8**	**14.4**	**2.1**
Սեզոնային պարենային ապրանքներ	**9.40**	**25.3**	**2.4**
Ձու	1.30	-24.0	-0.3
Մրգեր	3.20	16.2	0.5
Բանջարեղեն	4.90	45.8	2.2
Կարգավորվող ծառայություններ	**15.50**	**5.0**	**0.8**